**«Հեծանվորդների, սիրողական հեծանվասպորտի և սպորտային տուրիզմի միջազգային ֆեդերացիա» ՀԿ**-ն (այսուհետ՝ **«Հեծանվորդների ֆեդերացիա»**), որը հիմնադրվել է 2012 թվականին, իրականացնում է բազմաբովանդակ ծրագրեր՝ ուղղված Հայաստանում հեծանվային մշակույթի զարգացմանը, հեծանվի կիրառման խթանմանը՝ որպես այլընտրանքային փոխադրամիջոց, առողջ ապրելակերպի տարածմանն ու հեծանվային զբոսաշրջության զարգացմանը:

Հեծանվորդների ֆեդերացիան իրականացնելով մայրաքաղաքային և մարզային բազմաթիվ նախաձեռնություններ, միջոցառումներ և մրցաշարեր՝ հանդես է եկել հիմնավորված առաջարկներով տեղական ինքնակառավարման մարմիններին և պետական կառույցներին՝ նպաստելով այլընտրանքային փոխադրամիջոցների ենթակառուցվածքների ստեղծմանը, հանրային տրանսպորտի հետ համադրմանը, անվտանգ երթևեկության ապահովմանն ու համապատասխան օրենսդրական բարեփոխումներին:

Հեծանվորդների ֆեդերացիայի նախաձեռնությամբ 2017 թվականին Երևանի Կենտրոն վարչական շրջանում, 2023 թվականին Ստեփանավանում, 2024 թվականին Ապարանում և 2025 թվականին Էջմիածնում տեղադրվել են «Կիսիր ճանապարհը» տեղեկատվական նշանները՝ ճանապարհային անվտանգության և իրազեկվածության բարձրացման նպատակով:

Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացման խթանման համար ստեղծվել է նաև համանուն հասարակական կազմակերպություն՝ **«Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացման» ՀԿ**, որը նախաձեռնել է միջազգային մասնագիտական համաժողով՝ ներգրավելով նաև տարբեր զարգացած քաղաքներից ոլորտի փորձագետների:

«Հեծանվորդների ֆեդերացիա» և «Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացման» ՀԿ-ների համագործակցությունը ՀՀ Ներքին գործերի նախարարության հետ դիտում ենք որպես կարևոր և նպատակային քայլ, որը հնարավորություն կտա համատեղ վերլուծել ոլորտի խնդիրները, մշակել կիրառական լուծումներ և իրականացնել անվտանգ երթևեկությանը և կայուն շարժունակությանը միտված ծրագրեր:

*«Հեծանվորդների ֆեդերացիա» ՀԿ և «Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացման» ՀԿ հիմնադիր նախագահ՝ Արման Անտոնյան*

Ֆեդերացիայի գործունեության շրջանակներում՝ հեծանվային մշակույթի և այլընտրանքային փոխադրամիջոցների մասին վերջին ժամանակահատվածում որոշ տեսանյութերի հղումներ.

- ✓ ՀՀ Ազգային ժողովում համառոտ զեկույց՝ «Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացման և Կենտրոն ՎՇ բեռնաթափման» թեմայով.

  https://www.facebook.com/reel/1464227558317891

- ✓ Հեծանվային մշակույթի զարգացման և հեծանվային՝ այլընտրանքային փոխադրամիջոնների մասին հաղորդում՝ ԿՈՏԱՅՔ մարզային հեռուստաընկերության եթերում.

  https://www.facebook.com/reel/1353632395729529

- ✓ Հեծանվային մշակույթի զարգացման և հեծանվային՝ այլընտրանքային փոխադրամիջոնների մասին հաղորդում՝ FreeNews հեռուստաընկերության եթերում.

  https://www.facebook.com/reel/1028830186055055

- ✓ Վաղարշապատ համայնքում՝ Էջմիածնում հեծանվային մշակույթի տարածման և այլընտրանքային փոխադրամիջոցների կիրառության մասին. Առաջին ալիք, Լուրեր

  https://www.facebook.com/reel/1328216621984005

- ✓ Հեծանվային մշակույթը Հայաստանում. Առաջին ալիք, Առավոտ լուսո

  https://www.facebook.com/reel/1601904393931447

- ✓ Երևանում հեծանվի քաղաքային առաջին կայանատեղիի մասին. Առաջին ալիք, Լուրեր

  https://www.facebook.com/reel/175422605491979

- ✓ Հեծանվի համաշխարհային օրը Երևանում. Առաջին ալիք, Լուրեր

  https://www.facebook.com/reel/1615546409296289